«Արդշինբանկ» ՓԲԸ բաժնետերերի 2018 թվականի ապրիլի 27-ի տարեկան ընդհանուր ժողովը թիվ 2018-1-2 L որոշմամբ որոշել է՝

1. 2017 թվականի ֆինանսական հաշվետվությունների համաձայն 5 528 972 000 (հինգ միլիարդ հինգ հարյուր քսանութ միլիոն ինը հարյուր յոթանասուներկու հազար) ՀՀ դրամ գումարի զուտ շահույթը (հարկերի նվազեցումից հետո) բաշխել հետևյալ կերպ՝

1) 1 000 000 000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամը բաշխել «Արդշինբանկ» ՓԲԸ բաժնետերերին որպես շահութաբաժիններ՝ ըստ «Արդշինբանկ» ՓԲԸ կանոնադրական կապիտալում նրանց ունեցած մասնակցության համամասնությունների: Շահութաբաժինները բաշխել մաս-մաս՝ սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը ներառյալ պայմանով, որ դա չի հանգեցնի «Արդշինբանկ» ՓԲԸ կողմից օրենսդրական և պայմանագրային պարտավորությունների խախտման:

Վճարումներն իրականացնել օրենսդրական և պայմանագրային պարտավորությունների խախտման բացակայության հանգամանքը «Արդշինբանկ» ՓԲԸ ֆինանսական տնօրենի կողմից հաստատելուց հետո:

Շահութաբաժինների վճարումն իրականացնել համապատասխան գումարը «Արդշինբանկ» ՓԲԸ բաժնետերերի բանկային հաշիվներին փոխանցելու կարգով;

2) 276 448 600 (երկու հարյուր յոթանասունվեց միլիոն չորս հարյուր քառասունութ հազար վեց հարյուր) ՀՀ դրամի չափով (5 528 972 000 (հինգ միլիարդ հինգ հարյուր քսանութ միլիոն ինը հարյուր յոթանասուներկու հազար) ՀՀ դրամ զուտ շահույթի 5% (հինգ տոկոսի) չափով) կատարել պահուստային ֆոնդի (գլխավոր պահուստի) համալրում;

3) մնացած գումարն ուղղել «Արդշինբանկ» ՓԲԸ «Նախորդ տարիների շահույթ/վնաս» հաշվեկշռային հաշվին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: